МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ2, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

ք. Երևան **21.04.2024թ.**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/134»

(գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին)

ՊԱՐԶԵՑ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2024 թվականի հունիսի 7-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է ԵՊՀ միջցանցային էկրանի ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/134» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Մաստեր սթայլ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 01571846, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 8-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2024 թվականի օգոստոսի 6-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/134-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրացուցային օրվա ընթացքում մատակարարում իրականացնել, սակայն Պայմանագրով նախատեսված գնման առարկայի պատշաճ մատակարարում մինչ օրս չի իրականացվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն «գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.7.1 կետի ա) ենթակետի համաձայն, վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե «մատակարարվել է անպատշաճ

որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում», ինչպես նաև բ) ենթակետի համաձայն, «եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի»: Բացի այդ, Պայմանագրի 2.4.3 կետի համաձայն «վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք», սակայն, համաձայն Ընթացակարգի շրջանակներում ձևավորված պատասխանատու ստորաբաժանման դիրքորոշման, գնման առարկայի և համապատասխան լիցենզիաների իրավունքները չեն հանձնվել ԵՊՀ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 կետի և «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը.

ՈՐՈՇԵՑ

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ
ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ **Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ**